

## **1996-2016թթ. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից աղքատության մակարդակի գնահատման համար կիրառվող մեթոդաբանությունները**

Հայաստանում աղքատության մակարդակի գնահատման մեթոդաբանությունը մշակված է Համաշխարհային բանկի կողմից: Առաջին անգամ այն ներդրվել է 1996թ.-ին, այնուհետև վերանայվել է և կատարելագործվել 2004 և 2009թթ.-ին:

(1) 1996թ.-ից ի վեր, երբ Հայաստանում առաջին անգամ Համաշխարհային բանկի կողմից ներդրվեց տնային տնտեսությունների բարեկեցության ուսումնասիրության ժամանակակից մեթոդաբանությունը, ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը (ՀՀ ԱՎԾ)՝ Համաշխարհային բանկի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և այլ դոնոր կազմակերպությունների աջակցությամբ, շարունակաբար ջանացել է կատարելագործել տնային տնտեսությունների մակարդակով հավաքագրվող տվյալների որակը և սեփական հմտությունը՝ աղքատության մակարդակի առավել ստույգ գնահատման նկատառումներով: Այդ ջանքերն արդարացված էին, քանզի տնային տնտեսությունների հետազոտությունների արդյունքում հավաքագրված տեղեկատվությունը և վերջիններիս հիման վրա ստացված աղքատության մակարդակի քանակական գնահատականները շատ կարևոր ներդրում էին աղքատության հաղթահարման ռազմավարության ձևավորման և մշտադիտարկման (մոնիթորինգի) տեսանկյունից, ինչի համար պատասխանատվությունը ստանձնել էր ՀՀ կառավարությունը:

(2) 2004թ.-ին ՀՀ ԱՎԾ-ն լուրջ քայլեր էր ձեռնարկել տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության (SSԿԱՀ) կատարելագործման և աղքատության մակարդակի գնահատման մինչ 2008թ.-ը կիրառվող մեթոդաբանությունն արդիականացնելու ուղղությամբ: Համաշխարհային բանկի տեխնիկական աջակցությամբ՝ բազմաթիվ խորհրդատվությունների և գործնական աշխատանքների արդյունքում (1) արդիականացվեց հետազոտության ընտրանքի ձևավորումն՝ օգտագործելով ՀՀ 2001թ.-ի մարդահամարի տեղեկատվական բազան, (2) ընդլայնվեց ընտրանքի չափը, ապահովելու համար տվյալների ներկայացուցչականությունը մարզային կտրվածքով, (3) վերանայվեց SSԿԱՀ հարցաշարը՝ արտացոլելու համար 1998/99 թթ.-ից 2003թ.-ը տեղ գտած տնտեսական և սոցիալական փոփոխությունները, ինչպես նաև հարցաշարում ավելացվեց զբաղվածության վերաբերյալ համապարփակ բաժին, (4) ավելի խորը վերապատրաստում անցավ հետազոտությունն իրականացնող անձնակազմը:

ՀՀ ԱՎԾ-ի կողմից որոշակի ճշգրտվեց նաև աղքատության մակարդակի գնահատման մեթոդաբանությունը, կատարելագործվեց աղքատության միտումների և սոցիալ-տնտեսական իրավիճակի գնահատման ու վերլուծության կարողությունը: Այդ ճշգրտված մեթոդաբանությունը կիրառվեց 2004-2008թթ.-ին:

Սկսած 2007թ.-ից մինչև 2011թ.-ը՝ շնորհիվ «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՀՄՀ-Հայաստան) համաֆինանսավորման, ընտրանքի չափը տարեկան կտրվածքով ընդլայնվեց, և 2006թ.-ի 5 184-ի (միայն ՀՀ պետական բյուջեի հաշվին) համեմատ կազմեց 7 872 տնային

տնտեսություն: Մակայն 2012թ.-ից ՀՄՀ-Հայաստան կազմակերպության փակման պատճառով ընտրանքի չափը նվազեց մինչև 5 184 տնային տնտեսություն:

(3) Մույն զեկույցում ներկայացված արդյունքները հիմնված են՝ 2009թ.-ից սկսած, աղքատության մակարդակի գնահատման Համաշխարհային բանկի ճշգրտված մեթոդաբանության վրա, որն իրականացվել է Համաշխարհային բանկի փորձագետների աջակցությամբ: Ի տարբերություն ՀՀ ԱՎԾ-ի կողմից 2004-2008թթ. կիրառվող մեթոդաբանության՝ ճշգրտված մեթոդաբանությունն ունի որոշակի առանձնահատկություններ: Մասնավորապես, ձևավորվել է նոր նվազագույն պարենային զամբյուղ, որն արտացոլում է 2004-2008թթ.-ից ի վեր սպառման կառուցվածքի մեջ տեղի ունեցած փոփոխությունները, ինչպես նաև պարենային և ոչ պարենային ապրանքների ու ծառայությունների արդիական տեսակարար կշիռները:

Նոր սպառման մոդելը կառուցելիս կիրառվել է 2009թ.-ի ՏՏԿԱՀ արդյունքները: Այդ նոր նվազագույն պարենային զամբյուղը կիրառվել է ծայրահեղ (պարենային) և ընդհանուր (ստորին ու վերին) աղքատության գծերը հաշվարկելու համար (անցում է կատարվել աղքատության երկաստիճանից եռաստիճան մակարդակով գնահատման): Նոր զամբյուղը կկիրառվի որպես համեմատության հիմք հաջորդ մի քանի տարիների ընթացքում աղքատության մակարդակի գնահատման համար, և կճշգրտվի հաշվի առնելով հանրապետական միջին տարեկան գնաճի մակարդակը:

## **Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունը Հայաստանում**

Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունն (ՏՏԿԱՀ) առաջին անգամ Հայաստանում անց է կացվել 1996թ.-ին (մեկ ամսվա ընթացքում), այնուհետև 1998/99թթ.-ին, և սկսած 2001թ.-ից այն իրականացվում է ամեն տարի: Հետազոտություններն իրականացվում են մեկ տարվա ընթացքում՝ տնային տնտեսությունների և բնակավայրերի ամենամյա փոխարինմամբ (ռոտացիայով): Հետազոտության արդյունքները հիմնականում կիրառվում են երկրում սպառման վրա հիմնված աղքատության մակարդակի գնահատման համար, ինչպես նաև բնակչության կենսապայմանների վերաբերյալ այլ ցուցանիշների միջոցով արժեքավոր տեղեկատվություն տրամադրելու նպատակով:

**Հայաստանում բարեկեցության մակարդակը գնահատելու համար օգտագործվում է սպառման ազրեգացված ցուցանիշը:** Միջազգային փորձից ելնելով՝ ընդունված է, որ սպառումը եկամուտների համեմատությամբ ավելի ճշգրիտ տեղեկատվություն է ներկայացնում և այդքան էլ զգայուն չէ կարճատև տատանումների նկատմամբ՝ հատկապես անցումային տնտեսությամբ երկրներում: Սպառման ազրեգացված ցուցանիշը հաշվարկվում է տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությամբ ստացված տվյալների հիման վրա և ներառում է հետևյալ բաղկացուցիչները.

(ա) սպառված պարենային և ոչ պարենային ապրանքների արժեքը, ներառյալ սեփական արտադրության ապրանքները, մարդասիրական կազմակերպություններից և այլ աղբյուրներից ստացված օգնությունը, և

(բ) երկարատև օգտագործման ապրանքների հաշվարկային արժեքը:

ՀՀ ԱՎԾ-ն տնային տնտեսությունների մակարդակում (միկրոմակարդակ) չի լրահաշվարկում թաքցրած եկամուտները Հայաստանի ողջ բնակչության եկամուտներում:

Իրականում Ջինիի գործակիցը գերազանցում է հաշվարկված և զեկույցում բերված ցուցանիշները՝ մեծահարուստների հարցազրույցից զանգվածաբար հրաժարման և տնային տնտեսությունների կողմից սովերային եկամուտները, հետևաբար և ամբողջական ծախսերը թաքցնելու պատճառով:

### **(I) Ընտրանքի ձևավորումը**

2016թ.-ի ընտրանքի ձևավորման համար հիմք է հանդիսացել հանրապետության բոլոր մասնավոր տնային տնտեսությունների հասցեների տվյալների բազան, որը ստեղծվել է 2011թ.-ի ՀՀ մարդահամարի արդյունքների հիման վրա՝ Համաշխարհային բանկի տեխնիկական աջակցությամբ: Ընտրանքի ձևավորման համար օգտագործվել է ներկայացուցչական հավանականային ընտրանքի մեթոդ:

Ընտրանքը կազմելու համար գլխավոր համակցությունը շերտավորվել է ( բաժանվել է)

32 ստրատայի, որից 12-ը Երևանի վարչական շրջաններն են:

Մարզի մակարդակով բոլոր բնակավայրերը բաժանվել են երկու կատեգորիաների՝ քաղաքներ և գյուղեր:

Համաձայն այդ բաշխման, ձևավորվել է ըստ մարզերի և ք.Երևանի ստրատիֆիկացված երկաստիճան ընտրանք: Բոլոր մարզերը և ք.Երևանը, ինչպես նաև բոլոր գյուղական և քաղաքային բնակավայրերն ընտրանքային համակցության մեջ ներառվել են ըստ երկրի բոլոր տնային տնտեսությունների կազմում այդ բնակավայրերում բնակվող տնային տնտեսությունների համամասնության: Առաջին փուլում ընտրվել են հաշվային տեղամասերը, այսինքն, ընտրանքի սկզբնական միավորները, որոնք պետք է հետագոտվեն մեկ տարվա ընթացքում: Համաձայն 2016թ.-ի ՏՏԿԱՀ ընտրանքի, քաղաքային բնակավայրերում ընտրվել է ամսական 30, իսկ գյուղական բնակավայրերում՝ 18 հաշվային տեղամաս:

Երկրորդ փուլում ընտրվել են հետագոտվող տնային տնտեսությունները: Յուրաքանչյուր ամիս հետագոտվել է 432 տնային տնտեսություն, որից 270-ը՝ քաղաքային և 162-ը՝ գյուղական բնակավայրերից: Յուրաքանչյուր ամիս դաշտային աշխատանքներն իրականացրել են 48 հարցազրուցավար, որոնցից յուրաքանչյուրի ծանրաբեռնվածությունը կազմել է ամսական 9 տնային տնտեսություն:

2016թ.-ին ընտրվել է 5 184 տնային տնտեսություն, որից 3 240-ը՝ քաղաքային, իսկ 1 944-ը՝ գյուղական բնակավայրերից: Հետագոտության տվյալներն ապահովում են նվազագույն ներկայացուցչականություն՝ մարզային կտրվածքով:

**(II) 2008-2016թթ.-ի հետազոտությունների ընտրանքի չափը և բնակավայրերի ընդգրկվածությունը**

**Աղյուսակ 1. Հետազոտված տնային տնտեսությունների և ընտրանքում ընդգրկված գյուղական ու քաղաքային բնակավայրերի քանակը, 2008-2016թթ.-ին**

	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Հետազոտված տնային տնտեսությունների քանակը	7 872	7 872	7 872	7 872	5 184	5 184	5 184	5 184	5 184
Ընտրանքում ընդգրկված քաղաքային բնակավայրերի քանակը	44	45	46	44	37	41	36	40	43
Ընտրանքում ընդգրկված գյուղական բնակավայրերի քանակը	313	313	307	312	192	202	241	214	216

Աղբյուրը. ՀՀ ՏՏԿԱՀ 2008- 2016թթ.

**(III) Դաշտային աշխատանքների նկարագրությունը**

2016թ.-ի հետազոտության դաշտային աշխատանքների իրագործման համար կազմավորվել է 48 հարցազրուցավարից և 8 խմբավարից բաղկացած անձնակազմ: Հետազոտության իրականացումը վերահսկվել է համակարգողի և խմբավարների կողմից: Նախքան հետազոտության սկիզբը, դաշտային աշխատանքներն իրականացնող անձնակազմի համար կազմակերպվել է համապատասխան հրահանգավորում:

Յուրաքանչյուր հարցազրուցավար տարվա ընթացքում աշխատել է 12 քլաստերում (հաշվային տեղամասում)՝ այցելելով 9 տնային տնտեսություն մեկ ամսվա ընթացքում: Յուրաքանչյուր քլաստերում աշխատանքն ավարտելուց հետո հարցազրուցավարը լրացված հարցաթերթերն ու օրագրերը ներկայացրել է ստուգման և ծածկագրման, միաժամանակ ներկայացնելով նաև ընտրանքի հաշվետվությունը: Ողջ հավաքագրված տեղեկատվությունը կողավորվել է, անցել է տրամաբանական ստուգում, մուտքագրված տվյալները տարբեր օպերատորների կողմից համադրվել են, որից հետո անցել ծրագրային տրամաբանական ստուգում և ուղղվել՝ ըստ գրանցված սխալների ցանկի: 2016թ.-ին հետազոտված յուրաքանչյուր տնային տնտեսություն, մեկ ամսվա ընթացքում, օրագիրը լրացնելու համար ստացել է 1 500 դրամ: Մուտքագրված տեղեկատվության հիման վրա ստեղծվել է տվյալների բազա՝ օգտագործելով տվյալների մուտքագրման համար հատուկ ծրագրային փաթեթ: Դաշտային աշխատանքների ընթացքում հարցազրուցավարներն այցելել են 10 763 հասցե, իսկ գրանցված հրաժարման միջին հանրապետական մակարդակը կազմել է 9,8% (Աղյուսակ 2):

**Աղյուսակ 2. 2016թ.-ին հետազոտված տնային տնտեսությունների քանակը  
և հրաժարման դեպքերն ըստ ք. Երևանի և մարզերի**

Մարզեր	Լրացված հարցաթերթերի թիվը 2016թ.	Հրաժարման տոկոսը 2016թ.	Հրաժարման տոկոսը 2015թ.	Հրաժարման տոկոսը 2008թ.
ք.Երևան	1 404	19.7	19.5	18.9
Արագածոտն	324	0.8	0.8	2.6
Արարատ	432	6.1	10.1	7.5
Արմավիր	432	7.2	5.3	10.6
Գեղարքունիք	324	0.6	1.4	0.6
Լոռի	540	5.3	4.9	4.6
Կոտայք	324	6.9	6.1	2.3
Շիրակ	432	5.3	7.3	4.0
Սյունիք	324	0,5	0.2	2.2
Վայոց Ձոր	324	3.6	0.8	2.7
Տավուշ	324	5.1	7.7	2.9
<b>Ընդամենը Հայաստանում</b>	<b>5 184</b>	<b>9.8</b>	<b>9.6</b>	<b>7.5</b>

Աղբյուրը. ՀՀ ՏՏԳԱՀ 2016 (2008, 2015)

**Նշում.** Հրաժարման տոկոսը հաշվարկվել է որպես հրաժարման դեպքերի հարաբերություն այցելած հասցեների քանակի վրա:

Հետազոտությանը մասնակցելուց հրաժարման դեպքերի տեսակարար կշիռը, որը հաշվարկվում է որպես հրաժարման դեպքերի հարաբերություն ընդամենը այցելած հասցեների նկատմամբ, զգալիորեն տարբերվում է ըստ մարզերի: Հրաժարման ամենաբարձր մակարդակը գրանցվել է ք.Երևանում՝ 19,7%, ամենացածր մակարդակը (0.5%)՝ ՀՀ Սյունիքի մարզում: Ի դեպ, հետաքրքրական է, որ 2008թ.-ի համեմատ հրաժարման դեպքերի մակարդակը ողջ հանրապետության կտրվածքով աճել է 30,7%-ով: 2008թ.-ի համեմատ հրաժարման դեպքերի զգալի աճ է արձանագրվել Կոտայքի մարզում (3.0 անգամ), Տավուշի մարզում (1.8 անգամ), Շիրակի ու Վայոց Ձորի մարզերում (1.3 անգամ) և Լոռու մարզում (1.2 անգամ): Ինչպես նախորդ հետազոտությունների ժամանակ, 2016թ.-ի հետազոտությունը նույնպես գրանցել է համեմատաբար հարուստ տնային տնտեսությունների կողմից հրաժարման դեպքեր:

**(IV) Հետազոտության գործիքների նկարագրությունը**

Հետազոտության իրագործման համար օգտագործվել են հետազոտության հետևյալ գործիքները՝ «Կենսապայմանների ամբողջացված հետազոտության» հարցաթերթ, «Ընթացիկ ծախսերի, սպառման և եկամուտների» օրագիր, «Հարցազրուցավարի ուղեցույց»: Բացի այդ բոլոր հետազոտված տնային տնտեսություններին հատկացվել են գրքույկներ՝ «Որտեղ և ինչպես են կիրառվում տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքները» վերնագրով, որտեղից երևում է, որ հետազոտված տնային տնտեսությունների կողմից տրված պատասխաններն օգտագործվել են միմիայն ընդհանրացված և անվանազերծված տեսքով:

**«Կենսապայմանների ամբողջացված հետազոտության» հարցաթերթը** լրացվում է հարցազրուցավարի կողմից՝ ամսվա ընթացքում առնվազն հինգ անգամ տնային տնտեսություն կատարած իր այցելությունների ժամանակ: Տնային տնտեսության գլխավորի կամ այլ բանիմաց չափահաս անդամի հետ անմիջական հարցազրույցի ընթացքում հարցազրուցավարը հավաքագրում է տեղեկատվություն տնային տնտեսության կազմի, բնակարանային պայմանների, տնային տնտեսության անդամների զբաղվածության, կրթական մակարդակի և առողջական վիճակի, հողամասի, անասունների և գյուղտեխնիկայի առկայության ու օգտագործման, տնային տնտեսությունների միջև դրամական և ապրանքային հոսքերի և այլնի մասին:

2016թ. հարցաթերթում վերանայվել և որոշակի փոփոխությունների են ենթարկվել «Տնային տնտեսության անդամների ցուցակը», «Բնակարանային և բնակության պայմաններ», «Զբաղվածություն», «Կրթություն» և «Կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականը» բաժինները: 2016թ.-ին հարցաթերթում «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ» ԹՎինհինգ ծրագրի շրջանակներում ավելացվել է նաև նոր՝ «Սոցիալական բացառումների մոդուլ» բաժինը:

Այսպիսով, 2016թ.-ի հետազոտության հարցաթերթն իր մեջ ներառում է հետևյալ բաժինները. (1) տնային տնտեսության անդամների ցուցակը, (2) միգրացիա, (3) բնակարանային և բնակության պայմաններ, (4) զբաղվածություն, (5) կրթություն, (6) գյուղատնտեսություն, (7) սննդամթերքի արտադրություն (8) դրամական և ապրանքային հոսքերը տնային տնտեսությունների միջև, (9) առողջություն (ընդհանուր) և առողջապահություն, (10) պարտքեր, (11) կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականը, (12) ծառայությունների մատուցում, (13) սոցիալական օգնություն, (14) տնային տնտեսությունների գործունեությունը՝ որպես գործատու, սպասարկող անձնակազմի համար, (15) տնային տնտեսություններում էներգակիրների սպառումը հետազոտվող ամսվա ընթացքում և (16) սոցիալական բացառումների մոդուլ:

**«Ընթացիկ ծախսերի, սպառման և եկամուտների» օրագիրը** լրացնում է տնային տնտեսությունը՝ մեկ ամսվա ընթացքում: Ամեն օր տնային տնտեսությունը գրանցում է սննդամթերքի, ոչ պարենային ապրանքների և ծառայությունների ձեռք բերման համար կատարած իր բոլոր ծախսերը՝ տալով դրանց մանրամասն նկարագիրը, օրինակ՝ գնված սննդամթերքի համար նշվում է ապրանքի անվանումը, քաշը, արժեքը և այն վայրը, որտեղից գնվել է այդ ապրանքը: Բացի այդ, օրագրում տնային տնտեսությունը նշում է ինչպես սեփական հողից և գյուղատնտեսական կենդանիներից ստացված և օգտագործված սննդամթերքը, այնպես էլ այլ աղբյուրներից (նվեր, մարդասիրական օգնություն) ստացված սննդամթերքը: Օրագրում լրացվում են նաև գնված և անվճար ձեռքբերված ոչ պարենային ապրանքները և ստացված ծառայությունները: Օրագրում տնային տնտեսությունը նշում է նաև ամսվա ընթացքում ստացված եկամուտները: Ամսվա վերջում լրացվում է նաև քիչ քանակությամբ սպառվող սննդամթերքի և երկարաժամկետ օգտագործման ապրանքների կամ ծիսակատարությունների մասին տեղեկատվությունը: Օրագրում կատարված գրանցումները ստուգվում են հարցազրուցավարի կողմից հետազոտվող ամսվա ընթացքում տնային տնտեսություն կատարած 5 պարտադիր այցելությունների ժամանակ:

Հետազոտության օրագիրը բաղկացած է հետևյալ բաժիններից. (1) օրվա ընթացքում գնված սննդամթերք, (2) օրվա ընթացքում տանը սպառված սննդամթերք, (3) տնից դուրս սպառված սննդամթերքի վրա կատարած ծախսեր, (4) գնված ոչ պարենային ապրանքներ և ծառայություններ, (5) անվճար ստացված ոչ պարենային ապրանքներ և ծառայություններ, (6) տնային տնտեսության եկամուտները և դրամական մուտքերը, (7) սննդամթերքի տեսակներ, որոնք սովորաբար օրվա ընթացքում սպառվում են քիչ քանակներով, (8) անշարժ գույքի, երկարաժամկետ օգտագործման ապրանքների և ծիսական ծառայությունների ցանկ:

**Հարցազրուցավարի ուղեցույցը** մանրամասն հրահանգավորում է հարցաթերթի և օրագրի լրացման կարգը:

Հետազոտությունից առաջ հարցաթերթը, օրագիրը և հարցազրուցավարի **ուղեցույցը** վերանայվել և համապատասխան ուղղումների են ենթարկվել:

Սկսած 2012թ.-ից օրագրում գրանցված տվյալները կողավորվում են համաձայն «Անհատական սպառում՝ ըստ նպատակների» դասակարգչի (COICOP):